

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՂ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Էլոյան Նարեկ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Հայաստան

Համառոտ ներածական: Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա աշակերտի համար դառնում է ավելի գրավիչ, եթե այն սերտորեն կապվում է բնության, շրջապատող աշխարհի և հասարակական կյանքի հետ: Տուրիզմը գիտության և կյանքի շաղկապման այն կարևորագույն օղակն է, որը հնարավորություն է տալիս հանրակրթական տարբեր առարկաներից ստացած տեսական գիտելիքները անմիջապես կիրառելու և ստուգելու գործնականում [2, էջ 28]:

Բանալի բառեր: Տուրիստական պատրաստություն, միջառարկայական կապեր, գիտելիք, կարողություն, դպրոցականներ:

Հիմնախնդիրը: Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Ողջ ուսումնական գործընթացը կառուցվում է միջառարկայական կապերի հիման վրա:

Ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի կիրառման անհրաժեշտության հիմնավորման համար բերում են հետևյալ փաստարկները. «Որպես մեկ ամբողջականություն՝ տարբեր առարկաների շնորհիվ նյութի ուսումնասիրման հնարավորություն» [7]: Եվ այս տեսանկյունից տուրիստական պատրաստությունը, որը դպրոցականների ֆիզիկական դաստիարակության միջոցներից մեկն է, իր բազմաբնույթ բովանդակությամբ ու կիրառելիությամբ կարող է դիտարկվել այն եզակի միջոցը, որը դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների հետ ապահովում է միջառարկայական կապերը:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Միջառարկայական կապերի անհրաժեշտությունը մանկավարժության համար նոր հիմնախնդիր չէ, և խնդրի լուծումը մշտապես հիմնավորվել է փիլիսոփայական հայացքներով, տարբերակված գործընթացի և գիտական կարողությունների ու հմտությունների ինտեգրման այս կամ այն աստիճանի ընդհանուր զարգացման ընթացքում: Գիտելիքների փոխանցման խնդրին, սովորողների կարողությունների ձևավորմանը, դրանց համադրմանը և նոր իրադրության մեջ կիրառելուն նվիրված են մի քանի մանկավարժների հետազոտություններ [4, 6, 7]: Այսպես, Վ. Ն. Մակսիմովայի կարծիքով միջառարկայական կապերի բարեհաջող իրականացումը դրականորեն է ազդում ուսումնական գործընթացի վրա և նպաստում ակտիվ ձևերի կազմակերպմանը [7]: Առավել արդյունավետ է միջառարկայական կապերի իրականացումն այն դեպքերում, երբ այլ առարկաների ու դասընթացների գիտելիքները ոչ միայն ընդօրինակվում ու կիրառվում են որպես լուսաբանում, այլև գործածվում են որպես սովորողների մտածողության ակտիվացման միջոց, համեմատության ու ուսումնական նյութի ընդհանրացման, վերլուծության նպատակով և տարբեր ուսումնական առարկաների ուսումնասիրությամբ:

Հետազոտության նպատակը: Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել ֆիզիկական դաստիարակության գործընթացում տուրիստական պատրաստության և հանրակրթական առարկաների միջառարկայական կապերը:

Հետազոտության նորույթը: Ներկայացված են հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության և հանրակրթական առարկաների միջառարկայական կապերը:

Հիմնական նյութի շարադրանքը: Զբոսաշրջության (տուրիզմի) բազմակողմանի ներգործությունը դպրոցականների վրա պայմանավորված է առողջարարական, կրթական, դաստիարակչական և կիրառական նշանակությամբ [1, 3, 5]: Տուրիզմը այն եզակի միջոցներից մեկն է, որը ապահովում է դպրոցականների օրգանիզմի կոփումը, ֆունկցիոնալ վիճակի բարելավումը, բազմակողմանի ֆիզիկական պատրաստությունը և, դրա հետ մեկտեղ, նպաստում է անձի բարոյականային և հայրենասիրական, գեղագիտական ու աշխատանքային դաստիարակությանը [3, 5]:

Տուրիզմի կիրառելիությունը արտահայտվում է արշավների ժամանակ ձևավորված կյանքի համար կարևոր գիտելիքներում ու բազմազան կարողություններում: Վերջիններս ներառում են բովանդակությամբ ու ձևով տարբեր գործողություններ՝ տեղաշարժվել տեղանքի տարբեր պայմաններում, հաղթահարել բնական խոչընդոտներ, կողմնորոշվել քարտեզի ու կողմնացույցի օգնությամբ, կազմակերպել գիշերակաց, ցանկացած պայմաններում խարույկ վառել, սնունդ պատրաստել տարբեր դաշտային պայմաններում, անհրաժեշտ օգնություն ցուցաբերել այրվելու, սառչելու կամ արևահարվելու, միջատների, օձերի խայթոցի կամ այլ վնասվածքների դեպքում:


Հայտնի են տուրիզմի լայն հնարավորությունները կյանքում կիրառական նշանակություն ունեցող բազմաբնույթ շարժողական կարողությունների ձևավորման համար՝ մագլցել և վարցատկ կատարել, տիրապետել գետնանցմանը, սարից իջնելու անվտանգ եղանակներին և այլն:

Նկարում պատկերված են տուրիստական պատրաստության ընթացքում միջառարկայական կապերը:

Ներկայացնենք տուրիստական պատրաստության ընթացքում միջառարկայական կապերի ապահովման մի քանի օրինակ:

- Մաթեմատիկա: Հարթաչափով որոշել լանջի թեքությունը, աչքաչափով՝ գետի կամ գետակի լայնությունը, քայլերի հանրագումարով մոտավոր որոշել հաղթահարված տարածության ընդհանուր երկարությունը:
- Ֆիզիկա: Որոշել արագությունը, տեղեկանալ մթնոլորտային ճնշման, էլեկտրամագնիսական դաշտի մասին:
- Քիմիա: Իմանալ շրջակա միջավայրի աղտոտման գործոնները, կարողանալ տարբերել վտանգավոր նյութերը:
- Աշխարհագրություն: Ծանոթացում տեղանքում ռելիեֆին, դրանց բաղադրամասերի, շերտերի ուսումնասիրում: Տեղանքում արևի կամ կողմնացույցի օգնությամբ կողմնորոշում:
- Կենսաբանություն: Օրգանիզմի բոլոր ֆունկցիաների վրա (նյութափոխականության բարելավում, ֆունկցիոնալ կարողությունների և աշխատունակության բարձրացում) բնության բնական գործոնների բարենպաստ ազդեցության իմացություն: Պատկերացում ունենալ տեղանքի բույսերի մասին, տարբերել վայրի ուտելի բույսերը, հատապտուղները, սնկերը, ճանաչել դեղաբույսերը, պահպանել բնությունը և այլն:
- Պատմություն: Արշավների կազմակերպում պատմական, ազատագրական, հեղափոխական վայրերում, ծանոթացում տեղանքի պատմամշակութային և կրոնական արժեքներին:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ տուրիզմն ու դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն ունեն ինտեգրման լայն հնարավորություն:



Նկար: Միջառարկայական կապերը տուրիստական պատրաստության ընթացքում

Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ:

Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել, որ տուրիստական պատրաստությունը, լինելով դպրոցականների ֆիզիկական դաստիարակության միջոցներից մեկը, կարող է իր բազմաբնույթ բովանդակությամբ ու կիրառելիությամբ դիտարկվել այն եզակի միջոցը, որն ապահովում միջառարկայական բազմապիսի կապերը դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների հետ:

Ընդգծվում են հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության կարևորությունը և իրականացման անհրաժեշտությունը: Նաև պետք է փաստել, որ առկա են հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության իրականացման հետ կապված մի շարք հարցեր, որոնք արդիական են և լուծման կարիք ունեն: Հետագա հետազոտություններն ուղղված կլինեն 7-9-րդ դասարանների աշակերտների համար տուրիստական պատրաստության բովանդակության ու դասավանդման մեթոդիկայի մշակմանը և ֆիզիկական դաստիարակության գործընթաց ներդրմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Երանոսյան Հ., Չատինյան Ա., Հարությունյան Ջ., Տուրիզմ. ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1976, 392 էջ:
2. Երանոսյան Հ. Մ., Տուրիզմը բոլորի համար; Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1972, 184 էջ:
3. Դպրոցական տուրիզմը երեխաների ուսումնասիրման արդյունավետ միջոց, Հայկական ՍՍՀ մինիստրություն, Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ, Երևան, 1968, 22 էջ:
4. Абдуллаева Г. Д., Атажанов И. И., Межпредметные связи в современной школе// Актуальные проблемы гуманитарных и естественных наук, 2016, N3-3, с. 66-68.
5. Верба И. А., Голицын С. М., Куликов В. М., Рябов Е. Г., Туризм в школе, Москва, 1983, 160 с.
6. Гурьев А. И., Статус межпредметных связей в системе современного образования / А. И. Гурьев // «Наука и школа», 2002, N2, с. 41-45.
7. Максимова В.Н., Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.: «Просвещение», 1984, 184 с.

МЕЖПРЕЖМЕТНЫЕ СВЯЗИ В ПРОЦЕССЕ ТУРИСТИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ

Аннотация

В действующих стандартах и программах общеобразовательной школы особое внимание уделяется такому построению учебного процесса, которое обеспечивает не только овладение знаниями, но и способствует формированию процессов восприятия предметов, явлений, их анализу, обобщению и самое главное их практическому применению. Весь учебный процесс строится на основе межпредметных связей.

В этом аспекте туристическая подготовка, являясь средством физического воспитания школьников, по своему содержанию и прикладности может рассматриваться как единственное средство, обеспечивающее разностороннюю связь со всеми общеобразовательными предметами в школе.

Цель исследования: изучить в процессе физического воспитания межпредметные связи туристической подготовки и общеобразовательных предметов.

Представлены межпредметные связи в процессе туристической подготовки школьников.

Дальнейшие исследования будут направлены на разработку содержания и методики преподавания туризма для учащихся 7-9-ых классов и его внедрения в процесс школьного физического воспитания.

Ключевые слова: туристическая подготовка, межпредметные связи, знания, умения, школьники.

Список использованной литературы

1. Ераносян Г., Чатинян А., Арутюнян Дж.: Туризм. учебно-методическое пособие, Ереван, "Армения" издательство, 1976, 392 стр.
2. Ераносян Г., Туризм для всех; Ереван, "Армения" издательство, 1972, 184 стр.
3. Школьный туризм-эффективный способ изучения детей: Министерство Армянской ССР, научно-исследовательский институт педагогических наук. 1968, 22 стр.
4. Абдуллаева Г.Д., Атажанов И.И. Межпредметные связи в современной школе// Актуальные проблемы гуманитарных и естественных наук.- 2016.-N3-3. – С.66-68.
5. Верба И. А., Голицын С. М., Куликов В.М., Рябов Е. Г. Туризм в школе, Москва 1983,- 160с
6. Гурьев А.И. Статус межпредметных связей в системе современного образования / А.И. Гурьев // Наука и школа. – 2002. – N2. – С. 41–45.
7. Максимова В.Н. - Межпредметные связи и совершенствование процесса обучения. М.:Просвещение, 1984. - 184 с.

INTERSUBJECTIVE RELATIONS WITH SCHOOLS DURING TOURISM PREPARATION

Eloyan Narek
Armenian State Institute of Physical Culture and Sports
Yerevan, Republic of Armenia

Summary

In the current curricula of the secondary school and its standards, special attention is paid to the construction of the educational process, which ensures not only the acquisition of knowledge, but also the perception of the subjects, analysis, the formation of the generalization of the activities, phenomena among the schoolchildren, and most importantly, the application of that knowledge in practice. The whole educational process is built on interdisciplinary connections.

From this point of view, tourism training, being one of the means of physical education for schoolchildren, with its diverse content and uniqueness can be considered the only aspect that provides various interdisciplinary connections with all subjects taught in school.

The research aims to study the interdisciplinary connections between tourism training and general education subjects in the process of physical education.

Interdisciplinary connections during the touristic school preparation of schoolchildren are presented.

Further research will be directed to the development of the content and teaching methods of tourism preparation for 7th-9th grade students, as well as the introduction of a process of physical education.

Keywords: Tourism training, interdisciplinary connections, knowledge, ability, schoolchildren.

References:

1. Yeranossyan H., Chatinyan A., Harutyunyan J. Tourism. Educational-methodical manual, Yerevan, "Armenia" Publishing House, 1976, 392 p.
2. Yeranossyan H.M.. Tourism for everyone; Yerevan, "Armenia" Publishing House, 1972, 184 p.
3. School tourism as an effective way to study children. Ministry of the Armenian SSR, Scientific-Research Institute of Pedagogical Sciences, Yerevan 1968, 22 p.
4. Abdullaeva G.D., Atajanov I.I. Interdisciplinary connections in the modern school // Current Problems of Humanities and Natural Sciences, 2016, N3-3, pp. 66-68.

5. Verba I. A., Golitsin S. M., Kulikov V.M., Ryabov E. G., School Tourism, Moscow, 1983, 160 p.
6. Guryev A.I., The status of interdisciplinary connections in the system of modern education / A.I. Guryev // Science and school, 2002, N2, pp. 41-45.
7. Maksimova V.N., Interdisciplinary communication and improvement of the learning process. M.: Education, 1984, 184 p.

Материал был представлен и отправлен на рецензию: 28.09.2021

Принято к публикации: 26.09.2021

Рецензент: канд. пед. наук, доцент Тухманук Мкртчян

The material was submitted and sent to review: 28.09.2021

Was accepted for publication: 26.09.2021

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Tuxmanuk Mkrtchyan